



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 3

Հունվար 2011

Պետական գնումներ

Որ՞ն է պետական պատվիրատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հնդիանուր սահմանումներ. Պետական պատվիրատու, հանրային իրավունքի կողմից ղեկավարվող մարմին
- Համատեղ և կենտրոնացված գնումներ
- Կումունալ ծառայությունների ոլորտում պետական պատվիրատուն
- Բացառություններ



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Հանրային ոլորտի Հրահանգները կիրառվում են միայն, եթե մարմինը “պետական պատվիրատու է”: “Պետական պատվիրատու” տերմինը սահմանված է 2004/18/ԵՀ Հրահանգով (‘Հրահանգ’): Եթե մարմինը համապատասխանում է պետական պատվիրատուի սահմանմանը, ապա վերջինիս կարիքների համար կատարվող գնման գործընթացների վրա տարածվում են Հրահանգների պահանջները: Եթե մարմինը չի համապատասխանում սահմանմանը, ապա վերջինիս գնումների գործընթացի վրա չի տարածվում հրահանգի պահանջները: Եթե մարմինը չի համապատասխանում սահմանմանը, բայց գնումներն իրականացնում է հրահանգների պահանջներին համապատասխան, ապա դա չի ենթադրումոր Հրահանգի պահանջների՝ իր կողմից կատարված որևէ խախտում կլինի վիճարկման առարկա: Հրահանգը կամ կիրառվում է, կամ չի կիրառվում. չկա միջին օղակ:

Կա պետական պատվիրատուի երկու հիմնական դասակարգ, ինչպես սահմանված է Հրահանգում, մասնավորապես՝

- պետական կառավարման մարմիններ
- հանրային հատվածի կազմակերպություններ

Ի՞նչ է պետական “կառավարման մարմինը”: Պետական կառավարման մարմինները սահմանված են Հրահանգում՝ որպես “պետություն, տարածքային կամ տեղական իշխանության մարմիններ”: Այս սահմանումն ընդգրկում է ոչ միայն գործադիր իշխանության մարմինները, այլ նաև բոլոր պետական մարմինները, այսինքն՝ պետական կառավարման և տարածքային կամ տեղական իշխանության մարմինները: “Պետություն” տերմինը ներառում նաև բոլոր այն մարմինները, որոնք իրականացնում են *օրենսդիր, գործադիր և դատական* իշխանության գործառնություններ: Նույնը վերաբերում է այն մարմիններին, որոնք դաշնային պետություններում իրականացնում են այդ իշխանությունը դաշնային մակարդակում:

Պետության սահմանումը լայն է և Արդարադատության Եվրոպական դատարանը (ԱԵԴ) բացառապես կառուցողական մոտեցում է ցուցաբերել՝ որոշելու, թե արդյոք որևէ կազմակերպություն համապատասխանում է պետական կառավարման մարմնի սահմանմանը, թե ոչ: Այն, այսպիսով, ավելի շատ հաշվի է առնում դիտարկվող կազմակերպության փաստացի գործառնությունը, քան ազգային օրենսդրության կողմից կազմակերպությանը տրված ձևական դասակարգմանը: Պետական պատվիրատուն կարող է նաև կազմված լինել ասոցիացիաներից, որոնք ստեղծվել են մեկ կամ մի քանի նման մարմինների կողմից կամ հանրային հատվածի մեկ կամ մի քանի մարմինների կողմից:

Ի՞նչ է “հանրային հատվածի կազմակերպությունը”: Սա չունի հասարակ սահմանում. ավելի շատ կախված է նրանից, թե արդյոք այն ունի որոշակի հատկանիշներ: Այս հատկանիշները ներկայացված են որպես պայմաններ, որոնք պետք է բավարարվեն, որպեսզի այդ կազմակերպությունը համարվի հանրային հատվածի կազմակերպություն:

Հիմնական խնդիրը կենտրոնանում է երեք փոխլրացնող պայմանների շուրջ, որոնք սահմանված են Հրահանգով՝ հանրային հատվածի կազմակերպության առկայությունը նշելու համար: ԱԵԴ-ն հետևողաբար որոշել է, որ այդ

կազմակերպությունը պետք է բավարարի այս բոլոր երեք պայմանները, որպեսզի համապատասխանի սահմանմանը: Հրահանգի 1(9) հոդվածի համաձայն հանրային հատվածի կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը

- Պայման 1. հիմնադրվել է հանրային շահից բխող կարիքների բավարարման հատուկ նպատակով՝ չունենալով արդյունաբերական կամ առևտրային բնույթ և
- Պայման 2. ունի իրավաբանական անձի կարգավիճակ
- Պայման 3. Մեծ մասամբ ֆինանսավորվում է պետության կամ տարածքային կամ տեղական իշխանության մարմինների կամ հանրային հատվածի այլ կազմակերպությունների կողմից կամ ենթակա է կառավարչական վերահսկողության այս մարմինների կողմից կամ ունի ղեկավարող, կառավարչական կամ վերահսկիչ խորհուրդ, որի անդամների ավելի քան կեսը նշանակված են պետության կամ տարածքային կամ տեղական իշխանության մարմինների կամ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից:

Ի՞նչ է նշանակում պայման 1-ը: Սա սահմանված չէ Հրահանգում, բայց ԱԵԴ-ն անդրադարձել է մասնավորապես այս պայմանին և հասցեագրել է երկու առանձին, բայց փոխկապված հարցեր. (1) արդյոք կազմակերպությունը հիմնադրված է՝ բավարարելու հանրային շահից բխող կարիքները և (2) արդյոք այդ շահից բխող կարիքներն ունեն արդյունաբերական կամ առևտրային բնույթ (սահմանմանը բավարարելու համար չպետք է ունենան արդյունաբերական կամ առևտրային բնույթ):

“Հանրային շահից բխող կարիքները” *հիմնականում* այն կարիքներն են, որոնք բավարարվում են այլ կերպ, քան շուկայում ապրանքների կամ ծառայությունների հասանելիությամբ և որոնք հանրային շահով պայմանավորված պետությունը նախընտրում է ինքը մատակարարել կամ դրա նկատմամբ այն ձգտում է պահպանել որոշիչ ազդեցություն: ԱԵԴ-ն հակված է նայել պետության պահանջներին՝ հաշվի առնելով հատուկ խնդիրները, որոնք պետք է լուծվեն. որոշակի գործողությունների հստակ վերապահումը պետական կառավարման մարմիններին, խնդրո առարկա գործողությունների հետ կապված ծախսերը ծածկելու՝ պետության պարտավորությունը, ծառայության համար գանձվող վճարների վերահսկողություն, պահանջվող դիտանցման կամ անվտանգության աստիճանը և “հանրային շահը”:

Սույն սահմանման համար հավելյալ չափորոշիչն այն է, որ հանրային շահից բխող կարիքները չպետք է ունենան արդյունաբերական կամ առևտրային բնույթ: Մրանք հիմնականում գործունեության տեսակներ են, որոնք իրականացվում են մրցակցային շուկաներում՝ շահույթ ստանալու համար:

Սահմանմանը համապատասխանող կազմակերպությունների օրինակ են պետական բնակարանային ֆոնդը, կազմակերպությունը, որը հիմնադրվել է բացառիկության հիման վրա պաշտոնական կառավարչական փաստաթղթեր տրամադրելու համար, երկու համայնքների կողմից հիմնադրված և աղբի

հավաքման ու ճանապարհների մաքրման խնդիրներով զբաղվող ընկերությունը, տարածքային զարգացման կենտրոնները, որոնք աշխատում են՝ գրավելու օտարերկրյա ներդրումները: Հրահանգի III Հավելվածը ներառում է ԵՄ յուրաքանչյուր անդամ-երկրներում կազմակերպությունների ցուցակ, որում ընդգրկված կազմակերպությունները համարվում են “հանրային հատվածի կազմակերպություններ: Նախատեսված է, որ ցուցակները պետք է լինեն հնարավորինս ընդգրկուն, սակայն ոչ վերջնական: Նույնիսկ եթե կազմակերպությունը ընդգրկված չէ ցուցակում, այն, այնուամենայնիվ, կընդգրկվի, եթե բավարարի բոլոր երեք պայմաններին:

Կարո՞ղ է արդյոք պետական պատվիրատուն մասնակցել համատեղ գնմանը կամ կենտրոնացված գնմանը:

Իշխանության մարմինների կողմից իրենց պահանջները միավորելու և համատեղ կամ կենտրոնացված գնումների մարմնի միջոցով գնումներ կատարելու դեպքում կարող է լինել զգալի շահույթ և խնայողություն՝ և՛ վարչական ռեսուրսների, և՛ գների առումով: Հրահանգը չի սահմանափակում պետական պատվիրատուի իրավունքը՝ մասնակցել համատեղ գնումների: Հրահանգը պարունակում է հատուկ դրույթներ, որոնք թույլատրում են կենտրոնացված գնումների մարմնի հիմնադրումը և գործարկումը:

- **Համատեղ գնումներ:** Մի քանի պետական պատվիրատուներ կարող են միացնել իրենց պահանջները և համատեղ իրականացնել պայմանագրի շնորհման գործընթացը: Համատեղ գնումների այս ձևը կարող է իրականացվել պետական պատվիրատուներից յուրաքանչյուրի անունից կամ մեկ պետական պատվիրատուի անունից, որը գործում է ի շահ մյուսների: Այնքանով, որքանով այս պետական պատվիրատուները պարզապես գործում են միասին՝ առանց հատուկ նշանակության իրավաբանական անձ ստեղծելու կամ առանց իր անդամներից մեկին մյուսների համար գործակալ նշանակելու, նրանք կգործեն որպես պետական պատվիրատուների ասոցիացիա:
- **Կենտրոնացված գնումների մարմին:** Հրահանգը թույլատրում է կենտրոնացված գնումների գործառույթն իրականացնելու նպատակով ստեղծել «կենտրոնացված գնումների մարմին»
Հրահանգի իմաստով՝ կենտրոնացված գնումների մարմինը “պետական պատվիրատու է”, որը ձևավորվում է Բերում ապրանքներ և/կամ ծառայություններ, նախատեսված պետական մարմինների համար” կամ “շնորհում է պետական պատվերներ կամ կնքում է շրջանակային համաձայնագրեր՝ նախատեսված պետական մարմինների համար”: Հրահանգը նաև նախատեսում է, որ “անդամ-երկրները կարող են պայման սահմանել, որ պետական պատվիրատուն կարող է գնել աշխատանքներ, ապրանքներ և/կամ ծառայություններ կենտրոնացված գնումների մարմնից կամ նրա միջոցով” և որ կենտրոնացված գնումների մարմնից կամ դրա միջոցով աշխատանքներ, կտրթեր և/կամ ծառայություններ գնող պետական պատվիրատուները համարվում են Հրահանգին համապատասխանող այնքանով, որքանով կենտրոնացված գնումների մարմինը համապատասխանում է դրան:

գործունեություն” և միայն այն պայմանագրերի մասով, որոնք շնորհիվ էին այդ գործունեության իրականացման նպատակով: Ամփոփ, համապատասխան գործունեությունը ցանցերի տրամադրումն է կամ գործարկումը հետևյալի համար.

- Ջուր
- Էներգիա՝ ներառյալ էլեկտրականություն, գազ կամ ջեռուցում և աշխարհագրական տեղանքի շահագործում՝ նավթի, գազի, ածուխի և այլ պինդ վառելիքի հետագոտման և արդյունահանման նպատակով:
- Տրանսպորտային ծառայություններ - տրանսպորտային ցանցերի և կայարանային սարքավորումների գործարկում
- Փոստային ծառայություններ

Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգը նախատեսում է մեխանիզմ՝ տարբերակում մտցնելու համար զանազան իրավիճակների միջև, երբ պայմանագիրն ընդգրկում է մի քանի համապատասխան գործունեության տեսակներ, գործունեության տեսակներն ընդգրկված են և Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգում, և Հանրային ոլորտի Հրահանգում կամ համապատասխանող գործունեության, ինչպես նաև Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգում չընդգրկված գործունեության տեսակների միջև:

Ուշրև է Հոդված 30-ի բացառությունը:

Հոդված 30-ի համաձայն՝ Եվրոպական Հանձնաժողովը կարող է Կոմունալ ծառայությունների մասին Հրահանգի դրույթներից բացառություն շնորհել այն պետական պատվիրատուներին, որոնք իրականացնում են համապատասխանող գործունեություն, որը, այն անդամ-երկրում, որտեղ այն իրականացվում է, ուղղակիորեն ենթարկվում է մրցակցության և այն շուկայում, որի մուտքը սահմանափակված չէ:

Փորձարկումը, թե արդյոք շուկաները մրցակցային են, անհրաժեշտաբար հաշվի է առնում քննարկվող անդամ-պետությունում առկա և՛ իրավաբանական, և՛ փաստացի իրավիճակները և անհրաժեշտաբար պետք է հասցեագրի առանձին կոնկրետ դեպքեր: Բացառությունը շնորհվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից ընդունված Որոշման ձևով, որը հետևանք է ԵՄ անդամ-երկրի, պետական պատվիրատուի դիմումի կամ հենց Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ դիմումի: Հոդված 30-ի ընթացակարգը լրացվել է 2005/15 Որոշմամբ (“Որոշում”), որը, այլ հարցերի հետ մեկտեղ, նդգրկում է հրատարակման պահանջները, երկարաձգումները և որոշումների ուղարկման ընթացակարգեր:

Հետագա ընթերցանություն.

[SIGMA Public Procurement Training Manual](#)